

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 23.08.2022 թ. կայացած թիվ 12.21-22 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 27-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ և ՌՀՄ երիտասարդ գիտնականների համար հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին մասնակցության հայտերի երաշխավորում:
2. Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագրի մասնակցության հայտերը երաշխավորելու հարցը:
3. Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության - 2022 ծրագրի մասնակցության հայտերը երաշխավորելու հարցը:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ և տեսական ֆիզիկայի լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող ֆ.մ.գ.թ. Տիգրան Արայի Պետրոսյանի ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ և ՌՀՄ երիտասարդ գիտնականների համար հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին մասնակցության «Դաշտի քվանտային տեսության երևույթներ գրավիտացիոն դաշտերում և կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայում» վերնագրով հայտի երաշխավորման հարցը:

Ելույթ ունեցավ՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց մրցույթի պայմանները, ինչպես նաև Տիգրան Պետրոսյանի աշխատանքները:

Որոշեցին՝ Երաշխավորել վերը նշված հայտը ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ և ՌՀՄ երիտասարդ գիտնականների համար հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին մասնակցելու համար:

Լսեցին՝ Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագրի մասնակցության հայտերը երաշխավորելու հարցը:

Ելույթ ունեցավ՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց հայտի համադրված ֆիզիկայի ֆակուլտետի գիտական լաբորատորիայի գիտ աշխատող ֆ.մ.գ.թ. Անի Արթուրի Ավետիսյանի Կալիֆոռնիայի Համալսարանի հետ համատեղ ներկայացվող “Ոչ իոնացնող ճառագայթման ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությունը և դրանց վտանգի ռիսկերի գնահատումը” վերնագրով հայտի բովանդակությունը, արդիականությունը, խմբի անդամների գործունեությունը: Նա նշեց նաև, որ ֆակուլտետը պատրաստ է աջակցելու խմբին թեման իրականացնելու ընթացքում և ծրագրի ավարտին, ինչպես նաև տրամադրել առկա սարքավորումները:

Որոշեցին՝ Երաշխավորել Անի Արթուրի Ավետիսյանի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Գիտության կոմիտե ներկայացվող “Ոչ իոնացնող ճառագայթման ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությունը և դրանց վտանգի ռիսկերի գնահատումը” վերնագրով հայտը :

Լսեցին՝ Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության - 2022 ծրագրի մասնակցության հայտերը երաշխավորելու հարցը:

Ելույթ ունեցավ՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց հայտի դեկավար ֆիզիկայի ֆակուլտետի գիտական լաբորատորիայի գիտ աշխատող տ.գ.թ. Հենրիկ Մելքոնյանի “Վերակարգավորվող գրադիենտային ցուցիչով ոսպնյակներ lab-on-fiber տեխնոլոգիայում” վերնագրով հայտի բովանդակությունը, արդիականությունը, խմբի անդամների գործունեությունը:

Որոշեցին՝ Երաշխավորել Հենրիկ Մելքոնյանի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Գիտության կոմիտե ներկայացվող “Վերակարգավորվող գրադիենտային ցուցիչով ոսպնյակներ lab-on-fiber տեխնոլոգիայում ” վերնագրով հայտը :

Լսեցին՝ Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագրի մասնակցության հայտերը երաշխավորելու հարցը:

Ելույթ ունեցավ՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց հայտի համադրված ֆիզիկայի ֆակուլտետի գիտական լաբորատորիայի գիտ աշխատող տ.գ.թ. Հենրիկ Մելքոնյանի Բրյուսելի Ազատ Համալսարանի հետ համատեղ ներկայացվող “Advanced microfabrication with two photon polymerization (2PP) towards developing in vitro diagnostic lab-on-chip platforms” վերնագրով հայտի բովանդակությունը, արդիականությունը, խմբի անդամների գործունեությունը: Ծրագրի արտասահմանյան

ղեկավարներն են՝ Հեյդի Օտեվաեր (Heidi Ottevaere), Տիգրան Բաղդասարյան (Tigran Baghdasaryan): Հակոբյանը նշեց նաև, որ ֆակուլտետը պատրաստ է աջակցելու խմբին թեման իրականացնելու ընթացքում և ծրագրի ավարտին:

Որոշեցին՝ Երաշխավորել Հենրիկ Մելքոնյանի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Գիտության կոմիտե ներկայացվող “ Advanced microfabrication with two photon polymerization (2PP) towards developing in vitro diagnostic lab-on-chip platforms ” վերնագրով հայտը :

Ֆիզիկայի Ֆակուլտետի

Գիտական խորհրդի նախագահ՝

Ռ.Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Գ.Հ. Հովհաննիսյան